

## «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ»

### մրցանակ սահմանելու հայեցակարգ

#### 1. Մրցանակի էությունը

- 1) Տեղական ինքնակառավարման բնագավառում գենդերային հիմնահարցերի լուծմանն աջակցության և համայնքային մակարդակում որոշումների ընդունման հարցում կանանց դերի բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է **«Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ»** մրցանակ:
- 2) Մրցանակը տրվում է քաղաքային և գյուղական համայնքներին՝ բացառությամբ մայրաքաղաք Երևանից: Համայնքների ընտրությունը կատարում է մրցութային հանձնաժողովը, որի կազմը հաստատում է ՀՀ վարչապետը:

2. **«Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ»** մրցանակի համար մրցութային հանձնաժողովն ընտրությունը կատարում է, հիմք ընդունելով նախորդ տարվա ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1) Քաղաքային համայնքի ղեկավարի և քաղաքապետարանի աշխատանքը ՀՀ Կառավարության կողմից 2010 թ. Փետրվարի 10-ին հաստատված «Գենդերային քաղաքականության հայեցակարգի» իրականացման և 2011 թ. Մայիսի 20-ին հաստատված «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» և դրանից բխող նախորդ տարվա գենդերային քաղաքականության միջոցառումների ծրագրի կատարման ուղղությամբ:

2) Գենդերային քաղաքականության այն հիմնական խնդիրները, որոնց լուծմանն է նպատակաուղղել քաղաքապետարանը ենթակա հիմնարկների գործունեությունը նախորդ տարում: Համայնքային բյուջեում գենդերային ուղղվածությամբ ծրագրերի/միջոցառումների վրա կատարված փաստացի ծախսերի տեսակարար կշիռը: Գենդերային քաղաքականությունն իրականացնելիս քաղաքապետարանը որ հարցերի վրա է կենտրոնացրել ուշադրությունը: Ինչ մասնակցություն է ունեցել քաղաքապետարանի աշխատակազմը այդ աշխատանքում: Գենդերային քաղաքականությունն իրականացնելու արդյունքում դրական ինչ փոփոխությունների է հասել քաղաքապետարանը:

3) Ինչ աշխատանք է իրականացրել քաղաքապետարանը «Գենդերային քաղաքականության հայեցակարգի» և «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» մասին քաղաքի հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների ու հիմնական աշխատողների իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

- 4) Անցկացրել է արդյոք քաղաքապետարանն ուսումնասիրություններ՝ ուղղված քաղաքի հիմնարկներում և կազմակերպություններում գենդերային իրավիճակի բացահայտմանը:
- 5) Որքանով են նպաստել անցկացրած ուսումնասիրությունները նախադպրոցական, դպրոցական և բարձրագույն կրթության ոլորտում գենդերային կրթության և դաստիարակության բարելավմանը:
- 6) Ստեղծվել է արդյոք քաղաքապետարանում ինստիտուցիոնալ մեխանիզմ՝ խորհուրդ կամ հանձնաժողով, որը նպատակամետ աշխատանք է տանում պետական գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ և գենդերային հավասարակշռության հասնելու նպատակով ուղղորդում է քաղաքի հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը՝ ուղղված կոլեկտիվներում գենդերային իրավիճակի բարելավմանը: Մշակում է արդյոք ստեղծված կառույցը քաղաքի կազմակերպությունների և հիմնարկների համար երաշխավորություններ գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ:
- 7) Որքանով է կատարված աշխատանքը նպաստել գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և հասարակական-քաղաքական ոլորտում կանանց մասնակցության ակտիվացմանը:
- 8) Ինչ չափով են գենդերային հիմնախնդիրները լուսաբանվում տեղական մամուլում և հեռուստաալիքներով ու ռադիոյով: Ինչպես են օգտագործվում տեղական ՋԼՄ-ների հնարավորությունները հասարակական գիտակցության մեջ գենդերային կարծրատիպերի հաղթահարման և գենդերային հավասարության առաջնդման համար: Ինչպես են լուսաբանվում ՀՀ կառավարության որոշումները գենդերային հիմնահարցերի վերաբերյալ քաղաքի ՋԼՄ-ներում:
- 9) Ինչ աշխատանք են տանում քաղաքապետը և քաղաքապետարանը պետական գենդերային քաղաքականության մասին ավագանու անդամների իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ: Որոնք են գենդերային քաղաքականության իրականացման գործում ավագանու անդամների ներգրավման ձևերը:
- 10) Քաղաքում գործող հասարակական կազմակերպությունների և բնակչության հետ քաղաքապետի և քաղաքապետարանի համագործակցության պրակտիկան, մասնավորապես.
  - ա) հասարակական կազմակերպությունների ներուժի ներգրավումը պետական գենդերային քաղաքականության իրականացմանն ուղղված գործունեության մեջ,

- բ) կանանց լիդերության խթանման և կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքում հասարակական կազմակերպություններին ցուցաբերվող աջակցությունը,
- գ) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը ավագանու նիստերին,
- դ) բնակչության, հատկապես կանանց, ներգրավումը քաղաքի հիմնախնդիրների լուծման գործում, հասարակական կազմակերպությունների հետ հետադարձ կապի փորձը և բնակչության իրազեկումը,
- ե) սոցիալապես ակտիվ կանանց նախապատրաստումը տեղական ինքնակառավարման մարմինների հետագա ընտրություններում առաջադրելու համար,
- զ) ունի արդյոք քաղաքապետարանը գենդերային հիմնախնդիրների ուղղությամբ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացման փորձ:

#### 11) Ներկայացնել.

- ա) քաղաքապետարանի աշխատակազմի գենդերային կազմը, կանանց և տղամարդկանց թիվը ծառայողների բոլոր կարգերում, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում,
- բ) քաղաքի հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների և տեղակալների գենդերային կազմը, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում,
- գ) ավագանու գենդերային կազմը, ավագանու կազմում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը 2008 և 2012 թվականներին:

### 3. Համայնքների ընտրության գործընթացը

- 1) ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը մինչև տվյալ տարվա մարտի 15-ը իր [www.mta.am](http://www.mta.am) կայքէջում տեղադրում է վերը նշված ցուցանիշներից յուրաքանչյուրի գծով ընտրված 10-ական լավագույն համայնքերի ցանկերը: Փաստորեն, տեղադրվում են ընդամենը՝ 3 ցանկեր, յուրաքանչյուրում՝ 10 համայնքներ: Երրորդ ցուցանիշով ընտրված համայնքների ցանկին կցվում են նաև գենդերային ուղղվածությամբ ծրագրերի/միջոցառումների համառոտ նկարագրությունները:
- 2) ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը՝ ցանկերը հրապարակելուց հետո 10-օրյա ժամկետում կազմակերպում է խորհրդակցություն՝ մարզապետարանների և համայնքային ու գենդերային հարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների արդյունքում յուրաքանչյուր ցանկից ընտրվում է 3-ական համայնք, որի մասին կազմվում է արձանագրություն: Արձանագրության պատճենը և պարզևատրման վերաբերյալ

առաջարկությունը ներկայացվում են ՀՀ կառավարության աշխատակազմ՝ մինչև փվյալ փարվա մարտի 28-ը:

#### **4.Մրցանակների տեսակները**

- 1) Մրցանակի հիմնական տեսակը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պատվոգիրն է: Առաջին տեղի համար շնորհվող պատվոգիրը՝ ճիրանագույն հենքի վրա է պատրաստվում, 2-րդ տեղինը՝ կապույտ, իսկ 3-րդ տեղինը՝ կարմիր: Ընդհանուր առմամբ շնորհվելու է 9 (3x3) պատվոգրեր:
- 2) Մրցութային հանձնաժողովը/ այսուհետ՝ Հանձնաժողով/ ձևավորվում է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հրամանով:
- 3) Հանձնաժողովը բաղնացած է 5 անդամներից՝ որոնցից 3-ը պետական կառավարման մարմիններից, իսկ 2-ը՝ ոլորտում առավել լայն գործունեություն ծավալած միջազգային և հասարակական կազմակերպություններից:
- 4) Հանձնաժողովը իր գործունեությունը ծավալում է <<<< մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդեռային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին>> ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունիսի 18-ի N 78-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի N 51-Ա/1 հրամանով հաստատված ընթացակարգի համաձայն: